



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

**ՀԱԱՀ
ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

**ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԻՆՔՆԱՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՁԵՎԱԶԱՓՈՎ**

ԵՐԵՎԱՆ 2016

ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման ներքին համակարգ, որը նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:

<p>ՀԱԱՀ հավակնությունները (ամբիջիաները)</p> <p>ՀԱԱՀ-ի նպատակն է Բոլոնիայի գործընթացի պահանջներին, իր առաքելությանն ու որակի ապահովման քաղաքականությանը համապատասխան որակի ապահովման կայուն ներքին համակարգի ներդրումն ու զարգացումը՝ մասնավորապես որակի ապահովման և կառավարման համակարգի մեխանիզմների ստեղծումն ու կատարելագործումը:</p>	
<p>ՉԱՓՈՐՈՇԻՉ ա. ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման քաղաքականություն ու ընթացակարգեր:</p>	
<p>Հիմքեր</p>	<p>Որակի ապահովման ներքին համակարգի ձեռնարկը</p> <p>Որակի ապահովման քաղաքականությունը և ընթացակարգերը</p> <p>Այլ փաստաթղթեր</p>
<p><i>Ներկայացնել և վերլուծել ՄՈՒՀ-ի որակի ապահովման ներքին համակարգի քաղաքականության և ընթացակարգերի արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը և արդյունավետությունը / կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:</i></p> <p>ՀԱԱՀ-ում Որակի ապահովման (ՈԱ) համակարգը հիմնվել է 2011 թ-ին:</p> <p>Համալսարանում մշակվել և ներդրվել է որակի ապահովմանը ուղղված հետևյալ կանոնակարգային փաստաթղթային բազա, մասնավորապես՝</p> <ul style="list-style-type: none"> – Որակի ապահովման ձեռնարկը, – Որակի ապահովման հայեցակարգը և քաղաքականությունը, – Համալսարանի որակի ապահովման համակարգի մշտադիտարկման մեթոդաբանությունը և կարգը, – Համալսարանի ներքին և արտաքին շահակիցների բավարարվածության բացահայտման ընթացակարգը, համապատասխան մեխանիզմները և գործիքները, – Կրթական ծրագրերի մշակման, մշտադիտարկման, վերանայման ընթացակարգերը, – Համալսարանի կարգային քաղաքականությունը և դրան համապատասխան ընթացակարգերը, – Պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակների գնահատման ընթացակարգը, – Տեղեկատվության և հրապարակայնության ապահովման ընթացակարգերը և այլ 	

փաստաթղթային հենք:

Վերոնշյալ փաստաթղթերը քննարկվել և հաստատվել են համալսարանի գիտական խորհրդի կողմից, տրամադրվել համալսարանի բոլոր նպատակային կառուցվածքային ստորաբաժանումներին, ինչպես նաև տեղադրվել համալսարանի պաշտոնական կայք էջում՝ արտաքին շահակիցներին և հասարակությանը հասանելի լինելու համար (anau.am կայքի «Որակի ապահովում» բաժնի «Նորմատիվային փաստաթղթեր» ենթաբաժին http://anau.am/index.php?option=com_content&view=article&id=552&Itemid=145):

Վերոնշյալ փաստաթղթային բազան հիմք է կրթական բարեփոխումների և որակի ապահովման գործառույթների իրականացման համար:

ՀԱԱՀ կրթության որակի ոլորտում համալսարանի քաղաքականությունը ուղղված է կրթական ծրագրերի, կրթական ծառայությունների, գիտական և ինովացիոն գործունեության որակի երաշխիքի ապահովմանը և որակի համընդհանուր կառավարման սկզբունքների և չափորոշիչների հիման վրա (ENQA)՝ կրթության որակի համակարգի ստեղծմանը և համալսարանի որակի կառավարմանը, ներքին ու արտաքին շուկաներում բարձր մրցունակության ապահովմանը

(http://anau.am/images/stories/Voraki_kentron/normat.txtter/.pdf):

ՀԱԱՀ որակի ոլորտի քաղաքականությունը ուղղված է հետևյալ նպատակների իրականացմանը՝

- Շահակիցների պահանջներին և ազգային և միջազգային չափորոշիչներին համապատասխան որակյալ ժամանակակից կրթության ապահովումը:
- Որակի կառավարման համակարգի արդյունավետության անընդհատ բարելավում:
- Իրականացվող կրթական ծրագրերի և շնորհող որակավորումների անընդհատ պլանավորում, մշտադիտարկում, վերլուծություն և որակի գնահատում:
- Հաստատված չափորոշիչների և կարգերի հիման վրա ուսանողների գիտելիքների մակարդակի անընդհատ գնահատում:
- Դասավանդող անձնակազմի անընդհատ ուսուցում, մասնագիտական մակարդակի բարձրացում և նրանց կոմպետենցիաների գնահատում:
- Համալսարանի տեղեկատվական, նյութատեխնիկական և ուսումնամեթոդական հենքի ձևավորում և անընդհատ կատարելագործում:
- Համալսարանի կրթական ծրագրերի և գործունեության այլ տեսակների արդյունավետ կառավարման համար անհրաժեշտ ինֆորմացիայի հավաքագրում, վերլուծություն և տարածում:
- Համալսարանի կողմից իրականացվող կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների վերաբերյալ հասարակության անընդհատ տեղեկացում:

Որակի ապահովման քաղաքականությունը և ընթացակարգերը գործող են: Դրա հիմքն է հետևյալ գործընթացների իրականացումը՝

- Որակի կառավարման համակարգի արդյունավետության անընդհատ բարելավման նպատակով պարբերաբար իրականացնում է համալսարանի գործունեության որակի մշտադիտարկում, վերլուծություն և գնահատում (http://anau.am/images/stories/Voraki_kentron/normat._txter/vorak%20mshtaditarkum.PDF): Մասնավորապես իրականացվում է շահակից կողմերի անկետավորում՝ նրանց կարիքների բացահայտման և գնահատման համար (http://anau.am/index.php?option=com_content&view=article&id=1724&Itemid=145):
- Համալսարանում պարբերաբար վերանայման են երթարկվում բակալավրիատի և մագիստրատուրայի բոլոր մասնագիտությունների գծով ուսումնական պլանները (<http://anau.am/hy/study-prosecc/edplans/1748--2009>):
- Հաստատված չափորոշիչների և կարգերի հիման վրա պարբերաբար իրականացվում է ուսանողների գիտելիքների մակարդակի գնահատում (http://anau.am/images/stories/KrtakanBarepoxumner/kredit_nor.pdf):
- Համալսարանի շարունակական ուսուցման ռազմավարությանը համապատասխան իրականացվում են դասավանդող անձնակազմի վերապատրաստումներ և մասնագիտական մակարդակի բարձրացում ՀՀ-ում և արտերկրյա համալսարաններում:
- Պարբերաբար իրականացվում է համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակների և դասավանդման գործընթացի գնահատում ուսումնառողների, կրթության որակի վերահսկման հանձնաժողովի և ֆակուլտետային ատեստավորման հանձնաժողովի կողմից (http://anau.am/images/stories/Voraki_kentron/normat._txter/profesora-dasaxosakan/dasavandox%20masnagitakan.pdf):
- Իրականացվում է տեղեկատվական, նյութատեխնիկական և ուսումնամեթոդական հենքի անընդհատ կատարելագործում ուսումնառողների և պրոֆեսորադասախոսական կազմի շրջանում անցկացված հարցումների հիման վրա:
- Պարբերաբար հավաքագրվում և մշակվում են համալսարանի գործունեությանը վերաբերող առանցքային ցուցանիշները:
- Համալսարանի պաշտոնական կայքի միջոցով պարբերաբար իրականացվում է հասարակությանը տեղեկատվության ապահովումը ՀԱԱՀ կողմից իրականացվող կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների և այլնի վերաբերյալ (www.anau.am):

Որպես որակի ներքին ապահովման համակարգի ներդրման հիմք է հանդիսանում ՀԱԱՀ ինստիտուցիոնալ հավատարմագրումը (http://www.anau.am/index.php?option=com_content&view=article&id=1584&Itemid=145),

<p>դրա հիման վրա բարելավման գործողությունների պլանի մշակումը (http://www.anau.am/images/stories/Voraki_kentron/normat_txter/uxxich%20gorcoxyunneri%20plan.pdf) և իրականացումը:</p>
<p>ԶՍՓՈՐՈՇԻՉ ք. Որակի ներքին ապահովման գործընթացների կառավարման նպատակով ՄՈՒՀ-ը տրամադրում է մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ:</p>
<p>Հիմքեր</p> <p>Որակի ապահովման գործընթացներում մարդկային ռեսուրսների ներգրավվածությունը կարգավորող փաստաթղթերը</p> <p>Որակի ապահովման գործընթացների իրականացումը երաշխավորող ֆինանսական ռեսուրսների բաշխումը կարգավորող փաստաթղթերը</p> <p>Որակի ապահովման գործընթացների իրականացումը երաշխավորող նյութական ռեսուրսների բաշխումը կարգավորող փաստաթղթերը</p> <p>Որակի ապահովման ենթակառուցվածքը՝ ներառյալ մարդկային ռեսուրսները և նրանց աշխատանքային նկարագրերը</p>
<p><i>Վերլուծել որակի ներքին ապահովման գործընթացների կառավարման համար տրամադրվող ժամանակային, մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը / կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:</i></p> <p>Համալսարանում գործում է Կրթական բարեփոխումների, ռազմավարական պլանավորման և նորագույն տեխնոլոգիաների (ԿԲՌՊՆՏ) բաժին, որի <i>հիմնական նպատակն է</i> կրթական բարեփոխումների իրականացումը և համալսարանի որակի ապահովման համակարգի մշակումը, ներդրումը և կատարելագործումը (http://anau.am/index.php?option=com_content&view=article&id=1164&Itemid=145):</p> <p><i>ԿԲՌՊՆՏ բաժնի խնդիրները և գործառնությունները.</i></p> <ul style="list-style-type: none"> ▪ Համալսարանում որակի Եվրոպական ու ազգային չափանիշների, չափորոշիչների և ուղենիշների ներդրում: ▪ Համալսարանի առաքելությունից բխող՝ համալսարանի զարգացման կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ պլանավորում, համալսարանի զարգացման հիմնական գերակայությունների, նպատակների և խնդիրների բացահայտում և ամրագրում: ▪ Կրթական ծրագրերի պարբերական վերանայման ու մոնիթորինգի, ինչպես նաև որակի ապահովման գործընթացների վերահսկման մեխանիզմների ստեղծում ու կատարելագործում: ▪ Համալսարանի բոլոր կրթական ծրագրերում (միջին մասնագիտական, բակալավրային, մագիստրոսական, ասպիրանտական) կրեդիտային համակարգի վերանայում և կատարելագործում: ▪ Կրթության որակի ապահովման ներբուհական նոր մեխանիզմների մշակում և ներդրում, որակի ապահովման համապատասխան ներքին մեխանիզմների ու

ստորաբաժանումների շարունակական զարգացման և կատարելագործման գործուն համակարգի ստեղծում:

- Նոր կրթական տեխնոլոգիաների ուսումնասիրում և վերլուծություն:
- Կրթական գործունեության որակի ապահովման գործընթացի շարունակական բարելավման մեխանիզմների մշակում, գիտակրթական համակարգի մոնիթորինգի և գնահատման արդյունքների հիման վրա կրթության որակի կառավարման համակարգի կատարելագործում:

ԿԲՌՊՆՏ բաժինը իր գործառույթները իրականացնում է ելնելով սահմանված հաստիքներից և գործառույթների (http://anau.am/images/stories/Voraki_kentron/kbrpnt.pdf):

ԿԲՌՊՆՏ բաժնի գործառնության ապահովման համար Համալսարանը տրամադրում է աշխատասենյակ, անհրաժեշտ գույք և գրասենյակային սարքավորումներ՝

1. աշխատանքային սենյակ,
2. գրասենյակային գույք,
3. գրենական պիտույքներ,
4. համակարգչային տեխնիկա,
5. վերլուծության մասնագիտական ծրագրային միջոցներ,
6. ինտերնետ կապ:

Աշխատանքային գրասենյակում համակարգչային տեխնիկայի և ծրագրային միջոցներով իրականացվում է ստորաբաժանումներից հավաքագրված տվյալների կամ ինֆորմացիայի, որակի ապահովման մեխանիզմների մշակում, ինչպես նաև դրանց փորձարկում և արդյունքների մեկնաբանում և վերլուծություն:

Բաժնի գործունեությունը ֆինանսավորվում է համալսարանի բյուջեից ըստ աշխատակիցների կողմից զբաղեցված հաստիքների:


ՀԱԱՀ-ում որակի ապահովման և կառավարման գործընթացների արդյունավետության ապահովման համար համալսարանում գործում են՝

1. Կրթության որակի վերահսկման խորհուրդ (4 անձ) և հանձնաժողով (14 անձ),
2. ՈԱ ֆակուլտետային հանձնախմբեր (յուրաքանչյուր ֆակուլտետում ընդհանուր 38 անձ):
3. ՄԿԾ-երի վերանայման և մշակման ֆակուլտետային հանձնախմբեր:

Որակի ապահովման գործընթացների արդյունավետությունն ապահովելու համար Կրթական բարեփոխումների բաժինը համագործակցում է ֆակուլտետային որակի

հանձնախմբերի և այլ կառուցվածքային ստորաբաժանումների հետ:

ՀԱԱՀ-ի որակի ապահովման գործընթացները կազմակերպվում և իրականացվում են ըստ ՀԱԱՀ Որակի ապահովման կառուցվածքային սխեմայի (http://anau.am/images/stories/Voraki_kentron/vorak_karucvacq.png):



Կրթական գործունեության որակի ապահովման նպատակով Կրթության որակի վերահսկման խորհուրդը և հանձնախումբը պարբերաբար կազմակերպում է կառուցվածքային ստորաբաժանումների ներքին աուդիտ և գնահատում, դասալսումներ: Դրանք իրականացվում են ըստ կրթության որակի վերահսկման կանոնակարգի, վերահսկման պլանի, որակի կառավարման մեթոդաբանության և այլ փաստաթղթային բազայի: Նրանց կողմից անցկացված աուդիտի արդյունքում ստացված տվյալների վերլուծությունը ներկայացվում է ՀԱԱՀ գիտական խորհրդի նիստի քննարկմանը, և առաջ եկած խնդիրների լուծման ուղղությամբ ընդունվում են համապատասխան որոշումներ:

ՀԱԱՀ-ի ԿԲՌՊՆՏ բաժնի աշխատակիցները և ֆակուլտետային պատասխանատուները պարբերաբար մասնակցում են որակի ապահովմանը ուղղված աշխատաժողովների ՀՀ-

ում և արտերկրյա բուհերում:

ԿԲՌՊՆՏ բաժինը տրամադրված մարդկային, նյութական ռեսուրսներով սահմանափակ ժամկետներում իրականացրել են հետևյալ գործընթացները՝

- Որակի ապահովման համակարգին վերաբերող փաստաթղթային բազայի, մեխանիզմների և գործիքների մշակում և ներդրում գործածության մեջ,
- Համալսարանի շահակիցների շրջանում կարիքների բացահայտման նպատակով հարցումների կազմակերպում,
- Համալսարանի տարբեր կառույցներին վերաբերող տեղեկատվության հավաքագրում և վերլուծություն,
- Համալսարանի գործունեության առանցքային ցուցանիշների հավաքագրում և վերլուծություն:

ՉԱՓՈՐՈՇԻՉ գ. Ներքին և արտաքին շահակիցները ներգրավված են որակի ապահովման գործընթացներում:

Հիմքեր [Որակի ապահովման գործընթացներում ուսումնառողների և այլ շահակիցների ներգրավվածությունը հաստատող հիմքերը](#)

Ներկայացնել որակի ներքին ապահովման գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածության աստիճանը և վերլուծել արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը / կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Համալսարանի ղեկավարությունը կարևորում է բոլոր շահակից կողմերի ներգրավվածությունը որակի ապահովման գործընթացներում (http://anau.am/images/stories/Voraki_kentron/normat.txtter/...pdf – Որակի ապահովման համակարգում ներգրավված համալսարանական հիմնական ստորանաբանումներն և նրանց միջև պարտականությունների բաշխումը):

ՀԱԱՀ որակի ապահովման գործընթացներում ներգրավված են համալսարանի ներքին (ուսանողներ, պրոֆեսորադասախոսական կազմ) և արտաքին (շրջանավարտներ, դիմորդներ, գործատուներ) շահակիցները:

Համալսարանի ներքին և արտաքին շահակից կողմերը ներգրավված են որակի ապահովման գործընթացներում, մասնավորապես՝

- ❖ համալսարանի ինքնազնահատման և այլ գնահատման գործընթացներում,
- ❖ անկետավորման գործընթացին (հարցումներին),
- ❖ ներքին աուդիտներին,
- ❖ արտաքին գնահատման գործընթացին և այլն:

Համալսարանի որակի ապահովման ներքին համակարգի կայացման գործընթացում մասնակցում են՝

- Ուսումնառողները որպես հիմնական սպառող և ներքին շահակից կողմ,
- Պրոֆեսորադասախոսական կազմը,
- Արտաքին շահակիցներ (գործատուներ, շրջանավարտներ):

Համալսարանի դասախոսական կազմը ներգրավված է՝

- գիտական խորհրդին կից որակի վերահսկման հանձնախմբում,
- ՄԿԾ-երի վերանայման և մշակման գործընթացին,
- անկետավորման գործընթացում:

Պրոֆեսորադասախոսական կազմը հասարակական կարգով մասնակցում է համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումների ներքին աուդիտների անցկացմանը: Նրանց կողմից վեր են հանվում ստորաբաժիններում բացահայտված թերությունները և բացթողումները, կատարում են գրառումներ, վերլուծություն և կազմում հաշվետվություն, որը դրվում է քննարկման համալսարանի գիտական խորհրդում: Դրա հիման վրա կայացվում են որոշումներ՝ ուղղված ստորաբաժանումների գործունեության բարելավմանը և ուղղիչ գործողությունների իրականացմանը:

Պրոֆեսորադասախոսական կազմը պարբերաբար մասնակցում է համալսարանի գիտակրթական գործունեության գնահատման և իրենց կարիքների վերհանման գործընթացին:

Համալսարանի ուսանողները ներգրավված են որակի ապահովման գործընթացներում, մասնավորապես՝

- Համալսարանի հոգաբարձուների խորհրդում (ձայնի իրավունքով):
- Համալսարանի գիտական խորհրդի կազմում:
- Մասնակցում են որակի ապահովման գործընթացներում՝ որպես ինքնակառավարման մարմինների (ուսանողական խորհուրդ, ուսանողական գիտական ընկերություն) ներկայացուցիչներ:
- Պրոֆեսորադասախոսական կազմի գնահատման գործընթացում:
- Համալսարանի ռեսուրսային բազայի, ծառայությունների գնահատման գործընթացում՝ անկետավորման միջոցով:

Ֆակուլտետներում ձևավորվել են Մասնագիտությունների կրթական ծրագրերի վերանայման և մշակման հանձնախմբեր, որում ընդգրկված են մասնագիտական ամբիոնների դասախոսները և ուսումնառողները:

Արտաքին շահակիցները (գործատուները, աշխատաշուկայի ներկայացուցիչներ, պետական համակարգի ներկայացուցիչներ, շրջանավարտներ) ներգրավված են որպես պաշտոնական մասնակիցներ կառավարման խորհրդում (ձայնի իրավունքով):

Աշխատաշուկայի ներկայացուցիչները, գործատուները, պետական համակարգի ներկայացուցիչները ներգրավված են շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման և ավարտական աշխատանքների պաշտպանության անցկացման և գնահատման

գործընթացում:

Տվյալ գործընթացը համալսարանում կրում է շարունակական բնույթ:

Ուսանողների վերջնական ատեստավորման արդյունքում ատեստավորման հանձնաժողովի ղեկավարը (արտաքին շահակից) ներկայացնում է հաշվետվություն, որում նաև նշում են առաջարկություններ՝ ուղղված կրթական գործունեության բարելավմանը: Հաշվետվությունները ներկայացվում են համալսարանի գիտական խորհրդի նիստին, որտեղ կայացվում են որոշումներ՝ ուղղված բարելավման պլանների մշակմանը և իրականացմանը:

Աշխատաշուկայի ներկայացուցիչները ներգրավված են ՄԿԾ-երի վերանայման և վերամշակման գործընթացում, և համարվում են դրա մասնակից անդամ: Տվյալ գործընթացը նոր սկսվող գործընթաց է, որը պահանջում է շարունակականություն:

ՀԱԱՀ արտաքին շահակիցների հետ, մասնավորապես գործատուների հետ պարբերաբար կազմակերպվում են հանդիպումներ՝ ուղղված որակին առնչվող տարբեր հարցերի շուրջ քննարկմանը:

Տեմպուս Գոլեոն ծրագրի շրջանակներում գործատուների շրջանում իրականացվել են հարցումներ, ուղղված ՀԱԱՀ շրջանավարտների պատրաստման որակից գործատուների բավարարվածության գնահատմանը համալսարանի Ճարտարագիտական մասնագիտությունների ուսանողների օրինակով (www.govern.am): Հարցմանը մասնավորապես ներգրավվել են այն կազմակերպությունները, որտեղ կազմակերպվում են ճարտարագիտական մասնագիտությունների ուսանողների ուսումնական և արտադրական պրակտիկաները և այդ կազմակերպությունների որոշ մասում աշխատում են ՀԱԱՀ շրջանավարտներ:

Տեմպուս Արմենքա ծրագրի շրջանակներում ագրոպարենային ոլորտի աշխատաշուկայի ներկայացուցիչները մասնակցել են ագրարային ոլորտի որակավորումների ոլորտային շրջանակի մշակման գործընթացների քննարկումներին, որոնց առձագանքը հաշվի է առնվել ՈՌՇ-ի վերջնական տարբերակի կազմման համար:

Համալսարանում իրականացվում են հարցումներ ուղղված գիտակրթական միջավայրի (ռեսուրսների և ծառայությունների) գնահատմանը և շահակիցների կարիքների բացահայտմանը:

Ուսանողներ

- ❖ Ուսանողները ներգրավված են դասախոսների և դասավանդման որակի գնահատման գործընթացում, որն իրականացվում է յուրաքանչյուր տարի և ենթարկվում վերլուծության:
- ❖ Ուսանողները ներգրավված են համալսարանի ինքնագնահատման և ինքնավերլուծության գործընթացում՝
 - որպես հարցումների անմիջապես մասնակից,
 - որպես հարցման անցկացնող,

- որպես անկետաների տվյալները կողմնորոշ,
- որպես ինքնագնահատման համար անհրաժեշտ տվյալները հավաքագրող:
- ❖ *Ուսանողները ներգրավված են՝*
 - համալսարանի ռեսուրսային բազայի գնահատման գործընթացում,
 - համալսարանի ծառայությունների գնահատման գործընթացում,
 - վարչական կազմի գործունեության գնահատման գործընթացում,
 - գիտահետազոտական աշխատանքներում մասնակցության գնահատում:

Ուսանողները կանոնավոր կերպով մասնակցում են դասախոսի և դասավանդման գործընթացի գնահատմանը՝ «Դասախոսը ուսանողի աչքերով»: Գնահատման արդյունքները վերլուծվում և օգտագործվում են պրոֆեսորադասախոսական կազմի ատեստավորման ժամանակ:

Պրոֆեսորադասախոսական կազմ

- ❖ Համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմը ներգրավված է իր լեզվական և համակարգչային գիտելիքների բացահայտման և գնահատման գործընթացում:
- ❖ Համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմը ներգրավված է՝
 - համալսարանի կրթական համակարգի գնահատման գործընթացում,
 - համալսարանի գիտահետազոտական ոլորտի գնահատման գործընթացում:

Արտաքին շահակիցները նույնպես ներգրավված են համալսարանի գործունեության անկետավորման գործընթացում:

Համալսարանի շրջանավարտների շրջանում իրականացվում է կրթության որակից բավարարվածության մակարդակի գնահատման հարցումներ:

Այսպիսով, Համալսարանը կրթական, գիտական և խորհրդատվական ոլորտներում որակի ապահովման արդյունավետությունը ապահավելու և կատարելագործելու նպատակով հնարավորինս ընդլայնում է ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածության աստիճանը:

Համալսարանի տարբեր ֆակուլտետների ներկայացուցիչներ մասնակցել են Որակի ապահովման ազգային կենտրոնի փորձագետների կողմից կազմակերպվող վերապատրաստման դասընթացներին:

Վերոնշյալ վերապատրաստումները միտված են բուհերում որակի մշակույթի ձևավորմանը, ինչպես նաև որակի ապահովման գործընթացների վերաբերյալ առավել լայն շրջանակներում իրազեկվածության ընդլայնմանը:

ՉԱՓՈՐՈՇԻՉ ղ. Որակի ներքին ապահովման համակարգը պարբերաբար վերանայվում է:

Հիմքեր	<p>Որակի ներքին ապահովման համակարգի վերանայման քաղաքականությունը և ընթացակարգերը</p> <p>Որակի ներքին ապահովման համակարգի պարբերաբար վերանայման մեխանիզմները և գործիքները</p>
--------	--

Վերլուծել որակի ներքին ապահովման համակարգի պարբերաբար վերանայման մեխանիզմների արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը / կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

ՀԱԱՀ Կրթական բարեփոխումների, ռազմավարական պլանավորման և նորագույն տեխնոլոգիաների բաժնի կողմից մշակվել են Որակի ներքին ապահովման համակարգի վերանայման քաղաքականությունը, ընթացակարգերը, մեխանիզմները և գործիքները (տես՝ ՀԱԱՀ Որակի ներքին ապահովման համակարգի վերանայման քաղաքականություն և ընթացակարգեր):

Որակի ներքին ապահովման համակարգի վերանայումը ենթադրում է՝

- Որակի ոլորտի քաղաքականությունների և ընթացակարգերի վերանայում,
- Մասնագիտությունների կրթական ծրագրերի վերանայում
- Համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի աշխատանքի արդյունավետության վերանայում և այլն:

Որակի ներքին ապահովման համակարգի վերանայման ընթացակարգը ներառում է վերանայման նպատակը, խնդիրները, գործընթացի նկարագրումը, մեխանիզմները և գործիքները:

Որակի ներքին ապահովման համակարգի պարբերաբար վերանայման մեխանիզմները և գործիքները ներառված են ՀԱԱՀ որակի ներքին ապահովման համակարգի վերանայման ընթացակարգում (06.02.2015 թ., արձ. № 9):

Որակի ապահովման համակարգը իրականացվում է Դեմինգի ցիկլով (P-D-C-A):

Բոլոր մշակված փաստաթղթերի հիմքում ընկած է վերանայման գործընթացը ըստ «Փաստաթղթերի և գրառումների կառավարում» ընթացակարգի:

2012 թ.-ին ՀԱԱՀ-ի կողմից իրականացվել է համալսարանի ենթակառուցվածքային ինքնավերլուծության և ինքնագնահատման գործընթաց ՀՀ ՈԱԱԿ –ի կողմից սահմանված ինքնավերլուծության ձևաչափի համաձայն:

Ինքնավերլուծության արդյունքները քննարկվել են համալսարանի գիտական խորհրդում, պրոֆեսորադասախոսական կազմի և ուսումնառողների շրջանում՝ որպես տեղեկատվության ապահովման և իրազեկման մեխանիզմ:

Ինքնավերլուծության արդյունքների հիման վրա անցկացվել է արտաքին փորձաքննություն, որի արդյունքում փորձագետների դատողությունների հիման վրա ՀԱԱՀ-ի կողմից կազմվել և իրականացվում է Բարելավմանը ուղղված ուղղիչ գործողությունների պլան-ծրագիրը, որը ներկայացվել է ՀԱԱՀ գիտական խորհուրդ՝ քննարկման և հաստատման: Որպես համալսարանի որակի ապահովման համակարգի վերանայման հիմք են համարվում բարելավման պլանի հիման վրա իրականացված գործողությունները, մասնավորապես որակի ապահովման համակարգի նորմատիվային փաստաթղթերի մշակումը:

Համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմը մասնակցում է եվրոպական տար-

բեր բուհերում որակի ապահովմանը և կառավարմանը ուղղված աշխատաժողովներին, որը հիմք է հանդիսանում որակի ապահովման համակարգը վերանայման գործընթացի արդյունավետության ապահովման համար (կրթության որակի ապահովման ոլորտում փորձի ուսումնասիրում, վերլուծություն և ներդրում):

Համալսարանում պարբերաբար իրականացվում է շահակիցների անկետավորում, որի արդյունքները հիմք են հանդիսանում որակի ապահովման համակարգի վերանայման համար:

Ներկայացնել այն կազմակերպությունների ցանկը (նշելով երկիրը), որոնց օրինակով ՄՈՒՀ-ը կատարել է որակի ապահովման գործընթացների քաղաքականության և ընթացակարգերի բենչմարքինգ (առաջավոր փորձի համեմատական վերլուծություն):

1. **Գերմանիայի դաշնության Ֆուլդայի և Կասսելի և Ֆուլդայի համալսարաններ. Կրթության որակ և համապատասխանություն”** ծրագրի շրջանակներում Որակի ապահովման և կառավարման ոլորտում փորձի ձեռք բերում:
2. **Շվիդիայի Լինչոպինգի համալսարանում Արմենքա ծրագրի շրջանակներում վերապատրաստում (www.armenqa.am):**
3. **Գովեռն ծրագրի շրջանակներում վերապատրաստումների շարք (www.govern.am):**

ՀԱԱՀ-ի ԿԲՌՊՆՏ բաժինը կատարել է որակի ապահովման գործընթացների քաղաքականության և ընթացակարգերի այլ բուհերի փորձի ուսումնասիրություն:

Դրանցից են՝

1. Կազանի ֆեդերալ համալսարան/Ռուսաստան (<http://kpfu.ru/>),
2. Կեմերովի պետական համալսարան/ Ռուսաստան (<http://www.kemsu.ru/>),
3. Բրիսթոլի համալսարան /Անգլիա (<https://www.brighton.ac.uk/index.aspx>),

Ուսումնասիրվել է նշված Համալսարանների որակի ապահովման և որակի կառավարման համակարգի ներդրման և զարգացման փորձը, անհրաժեշտ փաստաթղթային բազայի կարևորությունը, մշտադիտարկման և աուդիտների անցկացման կարգը և գործընթացների կազմակերպումը:

ՉԱՓՈՐՈՇԻՉ Է. Որակի ապահովման ներքին համակարգն ապահովում է բավարար հիմքեր որակի ապահովման արտաքին գնահատման գործընթացների համար:

Հիմքեր	Տարեկան ինքնավերլուծությունները և հաշվետվությունները ըստ ինստիտուցիոնալ հավաստարմագրման չափանիշների և չափորոշիչների:
--------	--

Հիմնավորել տրամադրված հիմքերի հավաստիությունը և մոտեցման արդյունավետությունը / կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

2012 թ.-ին ՀԱԱՀ-ում իրականացվել է ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծություն, որի արդյունքում իրականացվել է ենթակառուցվածքային արտաքին գնահատում, կազմվել է փորձագիտական զեկույց:

Արդյունքում Համալսարանի կողմից, ելնելով արտաքին փորձագետների կողմից կատարված դատողություններից, մշակվել է բարելավման պլան, որի իրականացումը գտնվում է ընթացքի մեջ:

Իրականացման:

Համալսարանը ստեղծում է նախադրյալներ արտաքին գնահատման իրականացման համար: Մասնավորապես իրականացվում են՝

- համալսարանի շահակիցների կարիքների գնահատում,
- համալսարանի կառույցների ներքին գնահատում,
- կրթական ծրագրերի վերանայում և վերամշակում,
- նոր լաբորատոր հենքի ստեղծում և այլն:

ՀԱԱՀ-ում պարբերաբար կազմակերպվում են տարբեր գործընթանների մտադիտարկում և ներքին աուդիտներ, որոնց արդյունքները նույնպես հիմք են որակի արտաքին գնահատման համար:

Համալսարանի կողմից Տեմպուս Գոլդեն ծրագրի շրջանակներում 2016 թ.-ին իրականացվում է համալսարանի գործունեության ինքնագնահատում ASIIN համակարգի պահանջներին համապատասխան:

ԶՍՓՈՐՈՇԻՉ զ. Որակի ապահովման ներքին համակարգն ապահովում է ՄՈՒՀ-ի գործունեության թափանցիկությունը՝ տրամադրելով ՄՈՒՀ-ի գործընթացների որակի մասին տեղեկատվություն՝ ներքին և արտաքին շահակիցների համար:

Հիմքեր	<p>Շահակիցների տեղեկացվածությունն ապահովող մեխանիզմները և համապատասխան փաստաթղթերը</p> <p>Շահակիցների տեղեկացվածության աստիճանի գնահատման/վերլուծության արդյունքները մակարդակը</p>
--------	--

Վերլուծել ՄՈՒՀ-ի գործունեության թափանցիկությունը ապահովող մեխանիզմների արդյունավետությունը / կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

ՀԱԱՀ-ն իր գործունեության թափանցիկության ապահովման նպատակով իրականացնում է հետևյալ միջոցառումները՝

- Ֆակուլտետային մակարդակի վրա իրականացվող գիտակրթական գործունեության իրականացման վերաբերյալ հաշվետվողականության ապահովում ֆակուլտետների գիտական խորհրդի նիստերին,
- Համալսարանի մակարդակի վրա գիտակրթական գործունեության իրականացման վերաբերյալ հաշվետվողականության ապահովում համալսարանի գիտական խորհրդի նիստերին,
- Համալսարանի կառուցվածքային ստորաբաժնումների ներքին աուդիտների անցկացման արդյունքների ներկայացում համալսարանի գիտական խորհրդի նիստին քննարկման և հաստատման:
- Համալսարանի գործունեությանը վերաբող հաշվետվության ներկայացում համալսարանի գիտական խորհրդի նիստին և հրապարակում ՀԱԱՀ կայքի «Հաշ-

վետվություններ» բաժնում:

- Համալսարանի ֆինանսական գործունեության արտաքին աուդիտի արդյունքների հրապարակում www.azdarar.am կայքում:
- Համալսարանի գիտական հրապարակումների ներկայացումը կայք էջում (<http://anau.am/hy/science/science-pub>):
- Շրջանավարտների կարիքների հետազոտության անցկացման արդյունքների ներկայացումը համալսարանի կայք էջում (<http://anau.am/hen-gear/>):
- Համալսարանի դասախոսական կազմի գործունեությանը վերաբերող տեղեկատվության հրապարակում համալսարանի կայք էջում (person.anau.am) և այլն:

Համալսարանը կայքի միջոցով (www.anau.am) ներքին և արտաքին շահակիցներին լիարժեք տեղեկատվություն է տրամադրվում և ապահովում գործընթացների թափանցիկությունը:

Համալսարանի կայք էջում տեղադրված է տեղեկատվություն առկա մասնագիտությունների, գործող կրթական ծրագրերի, նորմատիվային փաստաթղթերի, ընդունված որոշումների, նորությունների և այլնի մասին:

Կայքում համակարգված ներկայացված է տեղեկատվություն ՀԱԱՀ-ի պատմության, կրթական, գիտական և տեղեկատվական գործունեության և ձեռքբերումների, միջազգային կապերի, ուսանողական կյանքի, մասնաճյուղերի և կառուցվածքային ստորաբաժանումների, «ՀԱՄԿ» պաշտոնաթերթի հերթական համարների, գիտական աշխատաժողովների Տեղեկագրերի և այլ տեղեկություններ:

ՀԱԱՀ-ն իր գործունեության և նվաճումներին վերաբերող տեղեկատվությունը հրապարակում է նաև ռեկտորի տարեկան հաշվետվության միջոցով, որը տեղադրված կայքի հաշվետվություններ բաժնում՝ նպատակ ունենալով ապահովելու տեղեկատվության տրամադրման գործընթացների թափանցիկությունը:

Համալսարանի տարեկան հաշվետվության մեջ արտացոլվում են՝

- Ընդունելության գործընթացը արտահայտված քանակական ցուցանիշներով,
- ուսանողների առաջադիմությունը,
- կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության հաշվետվությունները արտահայտված որակական և քանակական ցուցանիշներով,
- կադրային ներուժին վերաբերող քանակական ցուցանիշները,
- համալսարանի բյուջեյի պլանավորված և իրականացված ցուցանիշները և այլն:

Համալսարանի կայքը պարբերաբար թարմացնում է ինֆորմացիայիով, մասնավորապես համալսարանում տեղի ունեցող իրադարձություններով (միջազգային հանդիպումներ, աշխատաժողովներ, սեմինարներ ուսանողների և դասախոսական կազմի շրջանում և այլն):

Համալսարանի շահակից կողմերը հնարավորություն ունեն իրենց կարծիքն արտահայտել համալսարանի կայք էջում (www.anau.am) առկա հետադարձ կապի գործիքի

միջոցով, որը առկա է բոլոր կառուցվածքային ստորաբանումների էջում, ինչպես նաև համալսարանի ֆեյսբուքյան էջում (www.facebook.com/Armenian-National-Agrarian-University-ՀԱԱՀ-363415383766092/):

Հարկ է նշենք, որ Համալսարանի կայքում առանձին «Որակի ապահովում» էջով տեղեկատվություն է ներկայացվում ՀԱԱՀ-ի կրթության որակի ոլորտում Համալսարանի քաղաքականության, որակի ապահովման ներքին համակարգի կառուցվածքի մասին և այլն (<http://anau.am/hy/asau/2012-03-22-08-44-44>):



Համալսարանը ունի էլեկտրոնայի այլ հարթակներ, որտեղ ներկայացվում է տեղեկատվություն համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի գործունեության, կարիերային վերաբերող տեղեկատվություն, շրջանավատրների շրջանում իրականացված հարցումների և այլնի մասին:

Համալսարանի ներքին և արտաքին շահակիցները որակի ապահովման գործընթացների մասին ոչ միայն ստանում են տեղեկատվություն, այլև հաճախ իրենք ևս ընդգրկվում և մասնակցում են այդ գործընթացին՝ միաժամանակ ապահովելով վերջինիս տրամադրման թափանցիկությունը (այդ տեղեկատվությունը անմիջականորեն փոխանցում են այլ ներքին ու արտաքին շահակիցներին):

Չափանիշ X-ի վերաբերյալ ներկայացնել SWOT վերլուծություն վերջին 5 տարիների համար:

Ուժեղ Կողմեր	Թուօձլ Կողմեր
<p>1. ՀԱԱՀ-ն ունի ձևավորված որակի ապահովման կառուցվածք:</p> <p>2. ՀԱԱՀ-ն ունի ձևավորված որակի ապահովման կառույց և անձնակազմ:</p> <p>3. ՀԱԱՀ-ում առկա է որակի ապահովմանը ուղղված անհրաժեշտ նորմատիվային փաստաթղթային բազա՝ որակի ապահովման գործընթացների կանոնակարգված և արդյունավետ իրականացման համար:</p> <p>4. Համալսարանում համակարգված իրականացվում են որակի ապահովման գործընթացներ (շահակիցների անկետավորում, կառույցների ներքին գնահատում, ինստիտուցիոնալ հավատարմագրում):</p> <p>5. Կազմակերպվում է որակի բարելավման պլանի մշակում և իրականացում:</p> <p>6. Կրթական ոլորտում որակի քաղաքականությունն ըստ ռազմավարական խնդիրների և ուղղությունների:</p> <p>7. Իրականացավում է շահակիցների կարիքների գնահատում:</p>	<p>1. Որակի ապահովման և կառավարման գործընթացներում արտաքին շահակիցների ներգրավվածության ցածր աստիճանը:</p> <p>2. Որակի ապահովման ֆակուլտետային հանձնաժողովների մոտիվացիայի ցածր մակարդակը:</p>

ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ՎՏԱՆԳՆԵՐ
<p>1. Հետադարձ կապի մեխանիզմների միջոցով շահակիցների կարիքների բացահայտումը և գործընթացների բարելավում:</p> <p>2. Որակի ապահովման համար լավագույն փորձի ներդրում:</p> <p>3. Ինտեգրումը միջազգային կրթական որակի ապահովման համակազմին:</p>	<p>1. Արտաքին շահակիցների արձագանքի ոչ ամբողջական լինելու դեպքում որակի ապահովման համակարգը դանդաղ է զարգանում:</p>